ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԳՈՌԱ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/88 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
2	1. Նպատակ և կիրառման ոլորտ Լուսացույցային ուսումնական համակարգը նախատեսված է մանկապարտեզի տարածքում օրինակելի ճանապարհային երթևեկության պարապմունքների, դերային խաղերի և ուսուցողական վարժանքների կազմակերպման համար՝ նպատակ ունենալով երեխաների մոտ ձևավորել ճանապարհային երթևեկության կանոնների վերաբերյալ տարրական գիտելիքներ, անվտանգ վարքագիծ և լուսացույցային ազդանշաններին ճիշտ արձագանքելու հմտություններ։ Համակարգը կիրառվում է բացառապես մանկապարտեզի ներքին կամ փակ տարածքում՝ որպես ուսումնական և ցուցադրական միջոց՝ ապահովելով երեխաների առողջությունն ու անվտանգությունը։ 2. Ընդհանուր պահանջներ Սարքավորումները պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային արտադրության Նախատեսված մանկապարտեզի տարածքում շահագործման համար՝ ուսումնական և ցուցադրական նպատակներով։ Մատակարարվող մեկ հատ փաթեթը պետք է ներառի հետևյալ բաղադրիչները՝ • 1. Հեծանիվ (3-5 տարեկան երեխաների համար) - 2 հատ • 2. Մանկական Էլեկտրական ավտոմեքենա (3-5 տարեկան երեխաների համար) - 2 հատ • 3. Տրանսպորտային միջոցների լուսացույց - 1 հատ • 4. Հետիոտնային լուսացույց - 1 հատ • 5. Ճանապարհային երթևեկության նշանների փաթեթ - 12 հատ 6. Համազգեստի հավաքածու - 1 հատ Նկարագիր • 1. Հեծանիվ (3-5 տարեկան երեխաների համար) - 2 հատ Ընդհանուր դրույթներ Մատակարարվող ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային արտադրության։ Նախատեսված է 3-5 տարեկան երեխաների համար։ Ապրանքը պետք է համապատասխանի մանկական անվտանգության գործող նորմերին և ստանդարտներին։ Արտադրանքը պետք է ունենա որակի

համապատասխանության հավաստագիր (սերտիֆիկատ)։ Կառուցվածք • Կայուն, անվտանգ, մանկական էրգոնոմիկ դիզայն • Շրջանակ՝ մետաղական (պողպատ կամ ալյումին) • Ծածկույթ՝ հակակոռոզիոն, քերծվածքադիմացկուն ներկապատում Չափսեր և պարամետրեր • Անիվների տրամագիծ՝ 12–16 դյույմ • Առավելագույն ծանրաբեռնվածություն՝ ոչ պակաս, քան 25 կգ • Նստատեղ՝ փափուկ, կարգավորվող բարձրությամբ • Ղեկ՝ կարգավորվող բարձրությամբ Անիվներ • 2 հիմնական անիվ • 2 կողային հավասարակշռող անիվ • Անիվների նյութ՝ ռետինե կամ EVA • Սահուն և կայուն շարժում ապահովող կառուցվածք Անվտանգություն • Առանց սուր եզրերի և վտանգավոր դուրս ցցված մասերի • Շղթայի պաշտպանիչ ծածկ • Ոչ սահող ոտնակներ • Ղեկի բռնակներ՝ հակասահող • Արգելակային համակարգ՝ մեխանիկական (առջևի և հետևի) • Գունային լուծումները պետք է համապատասխանեն մանկական օգտագործման համար նախատեսված դիզայնին։ 2. Մանկական էլեկտրական ավտոմեքենա (3-5 տարեկան երեխաների համար) Ընդհանուր դրույթներ Մատակարարվող ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային արտադրության։ Նախատեսված է 3–5 տարեկան երեխաների համար։ Արտադրանքը պետք է համապատասխանի մանկական անվտանգության գործող նորմերին և ստանդարտներին։ Պետք է առկա լինի համապատասխանության հավաստագիր (սերտիֆիկատ)։ Սնուցման համակարգ • Վերալիցքավորվող մարտկոց (Rechargeable battery) • Աշխատանքային լարում՝ 6V կամ 12V (անվտանգ մանկական օգտագործման համար) • Լիցքավորման սարք՝ ներառված փաթեթում • Լիցքավորման միջին ժամանակ՝ 6–10 ժամ Շարժիչ և արագություն • Էլեկտրական շարժիչ • Առավելագույն արագություն՝ ոչ ավելի, քան 3–5 կմ/ժ • Սահմանափակ և անվտանգ արագության ռեժիմ Կառուցվածք և նյութեր • Կայուն և հարվածադիմացկուն պլաստիկ կորպուս • Մետաղական ամրացված շասսի (ցանկալի) • Առավելագույն ծանրաբեռնվածություն՝ ոչ պակաս, քան 25 կգ • Անիվներ՝ լայն և կայուն, որակյալ Կառավարում • Ղեկով ինքնուրույն կառավարում • Ոտնակ (գազ) • Առջև/հետ շարժման հնարավորություն • Կառավարման համակարգ՝ պարզ և մանկական օգտագործման համար հարմար Անվտանգություն • Անվտանգության գոտի՝ առկա • Առանց սուր եզրերի և վտանգավոր դուրս ցցված մասերի • Կայունության բարձր աստիճան • Արագության սահմանափակում՝ գործարանային կարգավորմամբ Գունային ձևավորումը՝ մանկական դիզայնով։ Լուսացույցային սարքավորումներ • 3. Տրանսպորտային միջոցների լուսացույց – 1 հատ • 4. Հետիոտնային լուսացույց – 1 հատ Բոլոր լուսացույցային լույսերը պետք է լինեն LED, միացվող, անվտանգ լարման վրա աշխատող։ Լուսացույցների և պատկերային նշանների գույները պետք է լինեն իրական, ստանդարտ ճանապարհային գույներով (կարմիր, դեղին, կանաչ)՝ համապատասխան ՀՀ ճանապարհային երթևեկության կանոններով սահմանված գունային պահանջներին։ • Տրանսպորտային միջոցների և հետիոտնային լուսացույցները պետք է լինեն կանգնակով (հիմքով), նախատեսված հատակին տեղադրման համար • Կանգնակները պետք է ապահովեն սարքավորման

	կայուն դիրք, չշրջվեն մանկական օգտագործման ընթացքում • Կանգնակների նյութը պետք է լինի թեթև, ամուր և անվտանգ մանկական միջավայրի համար • Լուսացույցների ընդհանուր բարձրությունը (կանգնակով) պետք է լինի մոտ 80–120 սմ • Լուսացույցների լուսարձակների տրամագիծը՝ ոչ պակաս քան 10 սմ • Սարքավորումները պետք է լինեն հեշտ տեղափոխվող և բազմակի տեղադրման համար պիտանի • 5. Ճանապարհային երթևեկության նշանների փաթեթ – 12 հատ/էսքիզը կցվում է/ • Բոլոր ճանապարհային երթևեկության նշանները պետք է լինեն կանգնակով (հիմքով) • Կանգնակները պետք է ապահովեն նշանների կայուն տեղադրում մանկապարտեզի տարածքում /բակային տարածք, խմբասենյակ, դահլիճ/ • Նշանների բարձրությունը (կանգնակով) պետք է լինի մոտ 120–130 սմ • Նշանների պատկերային մասի չափը՝ ոչ պակաս քան 20×20 սմ • Նյութը՝ ամուր պլաստիկ կամ համարժեք անվտանգ նյութ • Գույները՝ հստակ տեսանելի, համապատասխան իրական ճանապարհային նշանների գունային սխեմային 6. Ոստիկանի համազգեստի հավաքածու Ոստիկանի համազգեստի հավաքածու - 1 հատ /3-5 տարեկան երեխաների համար/ Ոստիկանի համազգեստի հավաքածուն նախատեսված է դերային խաղերի և ուսուցողական պարապմունքների համար և պետք է ներառի՝ Գլխարկ (ոստիկանական ոճի) – 1 հատ Բաճկոն կամ վերնաշապիկ (մանկական չափսի) – 1 հատ Գոտի կամ տարբերանշանային աքսեսուարներ (ոչ մետաղական, անվտանգ) Համազգեստը պետք է լինի թեթև, հիպոալերգեն նյութից առանց կոշտ, սուր կամ մետաղական տարրերի 3. Անվտանգության լրացուցիչ պահանջներ • Կանգնակները չպետք է ունենան սուր անկյուններ կամ վնասակար եզրեր • Տեղադրման ընթացքում չպետք է պահանջվեն հատուկ գործիքներ • Սարքավորումները պետք է նախատեսված լինեն մանկական օգտագործման համար և համապատասխանեն ուսումնական նպատակներին Մատակարարումը իրականացվում է մատակարարի միջոցների հաշվին՝ գնորդի նշված հասցեներով: Երաշխիք՝ 12 ամիս: Մեկ տարվա ընթացքում պետք է անհրաժեշտության դեպքում իրականացվի երաշխիքային սպասարկում՝ սարքավորումների վերանորոգում:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ГОРА ГРУПП ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/88 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
2	